



Doi: 10.56737/2953-7843-2025.01-128

ՍԻՍԱՄԱՏՅԱՆԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ¹

«ՄԱՇՏՈՑ»

(Յորում աւանդին սրբազան արարողութիւն՝ ազգիս ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցոյս Հայոց, Ս. Էջմիածին, 2024, 568 էջ)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւնը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ Ս. Էջմիածնի ծիսական հանձնախմբի երաշխավորութեամբ, 2024 թ. լույս ընծայեց «Մաշտոց» ծիսարանը, որը եկեղեցականների շրջանում հայտնի է նաեւ «Ձեռաց Մաշտոց» անվամբ:

Լինելով Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրէն եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավոր՝ քահանա, ի սկզբանէ նպատակ էինք դրել հրատարակել «Ձեռաց Մաշտոց» ծիսամատյանի քննական ծավալուն բնագիր, որի անհրաժեշտութիւնն իրապէս նկատում էինք: Միաժամանակ հստակ գիտակցում էինք՝ պահպանված հնագույն բնագրերն այնքան մեծաթիվ են, որ դրանց վերլուծութիւնը, համեմատութիւնն ու ծիսարանի նոր՝ առավել ընդարձակ բնագրի կազմումը կլինեն խիստ աշխատատար եւ կպահանջեն երկար ժամանակ: Նշալ բոլոր խնդիրները դիտարկելով եւ նկատի ունենալով՝ որոշեցինք նախաձեռնել «Ձեռաց Մաշտոց»-ի էականորեն տարբերվող հրատարակութիւն՝ սահմանափակվելով միայն ծիսամատյանի էջմիածնական՝ 1836 թ., 1870 թ., 1894 թ. եւ 1905 թ. տպագիր օրինակների բնագրերի համեմատութեամբ (համեմատական աշխատանքը կատարել է Սեդա Ստամբուլցյանը):

Ինչպէս վերը նշեցինք, սույն հրատարակութիւնն ականհայտ տարբերվում է մինչ այժմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տպագրված «Ձեռաց Մաշտոց»-ներից, քանզի ներկայացնում է Ս. Մկրտութեան եւ Ս. Դրոշմի կա-

¹* Ստացվել է՝ 4.02.2025, գրախոսվել է՝ 9.02.2025: Էլ. հասցե՝ terararatqahana@gmail.com:

նոնները՝ 2014 թ. հաստատված բարեփոխյալ նոր ծիսակարգը եւ 1836 թ., 1870 թ., 1894 թ. եւ 1905 թ. էջմիածնական տպագիր օրինակների մանրամասն համեմատության հիման վրա ճշգրտված մնացյալ կանոնները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ էջմիածնական տպագիրների հիման վրա ճշգրտված կանոններում հավելյալ ճշգրտումներ կատարելու համար երբեմն գործածվել են նաեւ այս խմբից դուրս, այսինքն՝ այլ վայրերում եւ հաճախ նաեւ այլ խմբագրություն ներկայացնող հետեւյալ տպագիր մշտողները.

1. Ամստերդամ, 1667.

2. Զմիւռնիա, 1676.

3. Կոստանդնուպոլիս, 1704, 1714 (Մեծ Մաշտոց), 1726 (համառոտյալ Մաշտոց, ֆանիցս վերահրատակվել է), 1807 (Մեծ Մաշտոց), 1814 (վերահրատ. 1824, 1834, 1848 , 1857).

4. Վենետիկ, 1831 (սա եւս հետագայում վերահրատարակվել է).

5. Երուսաղէմ, 1879 (վերահրատ. 1886, 1896, 1901), 1843 (միայն Ս. Մկրտության կարգն է՝ հին խմբագրությամբ).

6. Շուշի, 1840.

7. Կալկաթա, 1836.

Երբեմն ճշտումներ են կատարվել նաեւ հետեւյալ հրատարակությանը (եթե անհրաժեշտ կարգերն այնտեղ եղել են)՝ «Մայր Մաշտոց», հտ. Ա., գիրք Ա., Ժ. դար, ըստ հնագույն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, կազմող՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Ս. էջմիածին, 2012:

Պետք է նշել, որ Ս. էջմիածնում 1836 թ., 1870 թ., 1894 թ. եւ 1905 թ. հրատարակված «Զեռաց Մաշտոց»-ների հետ նույն խմբում, ըստ նմանության, կարելի է դասել վերոնշյալ «Զեռաց Մաշտոց»-ներից հետեւյալ երեքը՝

1. Կոստանդնուպոլիս, 1814.

2. Շուշի, 1840.

3. Երուսաղէմ, 1879.

«Զեռաց Մաշտոց»-ների 1836 թ. եւ 1870 թ. հրատարակություններն ունեն գրեթե նույն կարգերը՝ բացի նշանօրհների եւ հոգեհանգստյան կանոններից, որ չկան 1836 թ. հրատարակության մեջ, եւ հանգստյան շարականներին հաջորդող զանազան երգերից (զանձեր, ողբ), որ կան 1836-ում, բայց զետեղված չեն 1870 թ., 1894 թ., 1905 թ. լույս տեսած օրինակներում:

Բովանդակային առումով 1836 թ. եւ 1870 թ. հրատարակությունները հաճախ նույնն են, սակայն 1870-ի տպագիր օրինակում կատարվել են որոշ փոփոխություններ, հատկապես ցուցումների ներկայացման մեջ: Ննչեցելոց՝ միայն 1836-ում եղած զանազան երգերը 2024 թ. հրատարակությունում չեն ներառվել՝ հետեւելով 1870 թ., 1894 թ., 1905 թ. օրինակներին:

1894 թ. եւ 1905 թ. հրատարակություններն ունեն նույն կանոնները: 1894-ում, 1836 թ. եւ 1870 թ. հրատարակությունների համեմատ, կատարվել են հավելումներ, այս «Ձեռաց Մաշտոց»-ն ունի վեց հավելյալ կանոն, որ չկան 1836 թ. եւ 1870 թ. օրինակներում, բայց նաեւ անփութության հետեւանքով եղած մանր-մունր բացթողումներ ու վրիպակներ, որոնք հաճախ կրկնվում եւ նույնիսկ ավելանում են 1905-ի հրատարակության մեջ:

1894 թ. եւ 1905 թ. հրատարակությունները բովանդակապես քիչ են տարբերվում: Զգալի տարբերություններ կան միայն հանգստյան շարականների կարգերում. 1905-ում այս կարգերը խիստ համառոտ են: 1905 թ. հրատարակությունն ունի նաեւ մեկ այլ առանձնահատկություն, այն մասերը, որ կրկնվում են տարբեր կարգերում, բոլոր կարգերում էլ տպագրված են եւ բնագրի համար ընթերցողին չեն հղում այլ էջ, ինչպես մյուս «Ձեռաց Մաշտոց»-ներում:

1894-ում ավելացված եւ 1905-ում կրկնված կարգերից երկուսը՝ «Կանոն փարատելոյ գտուն նորածին մանկանց» եւ «Կանոն աշակերտ օրհնելոյ», կան միայն Շուշի 1840 թ. հրատարակության մեջ, որից եւ վերցվել են:

Տնօրհներքների կարգերը զետեղված են նաեւ Վենետիկի 1831 թ. եւ Երուսաղեմի 1879—1901 թթ. հրատարակություններում (1894-ի եւ 1905-ի այլ կարգերում եւս բնագրային որոշ փոփոխություններ կատարվել են երուսաղեմյան «Ձեռաց Մաշտոց»-ի հետեւողությամբ):

Մնացյալ հավելյալ երկու կանոնը չկան երուսաղեմյան «Ձեռաց Մաշտոց»-ում եւ Շուշի 1840 թ. օրինակում: Ժամահար օրհնելու կանոնն այլ խմբագրությամբ զետեղված է հետեւյալ «Ձեռաց Մաշտոց»-ներում՝ Զմյուռնիայի 1676 թ., Կոստանդնուպոլսի 1704 թ. եւ Վենետիկի 1831 թ., ինչպես նաեւ Մեծ մաշտոցներում: Իսկ նոր հաց օրհնելու կանոնը, որն ընդամենը մեկ աղոթք է՝ «Պահպանիչ»-ի հավելմամբ, կա միայն Վենետիկի 1831 թ. հրատարակության հավելվածում, որում ներկայացված են կաթոլիկ կարգեր («...յաւելումք եւ կարգաւորութիւնս ինչ ի Մաշտոցէն լաւիմացոց ի վերջ մատենիս», ինչպես գրված է հավելվածի նախաբանում):

1894 թ. եւ 1905 թ. հրատարակությունների այն կանոնները, որ չկան

1836 թ. եւ 1870 թ. օրինակներում, հավելյալ ճշգրտության համար, համեմատվել են այլ «Ձեռաց Մաշտոց»-ներում եղածների հետ:

«Ձեռաց Մաշտոց» պարունակող հայերեն ձեռագրերը մեծաթիվ են, եւ քանի որ այս հրատարակության նպատակը «Ձեռաց Մաշտոց»-ների համապարփակ քննությունը չէ, այլ միայն էջմիածնական շորս հրատարակությունների համեմատական հրատարակությունը, ուստի երբեմն համեմատական բնագիր կազմողը հավելյալ ճշգրտումների համար բավարարվել է միայն հետեւյալ առձեռն՝ թվայնացված եւ առցանց տեղադրված ձեռագիր մաշտոցների համեմատությամբ.

Լոս Անջելեսի Կալիֆոռնիական համալսարանի գրադարան՝

- Arm. MS 21 (1513 թ.)
- Arm. MS 22 (ԺՁ.—ԺԷ. դդ.)
- Arm. MS 23 (ԺՁ.—ԺԷ. դդ.)
- Arm. MS 24 (1693 թ.)

Օ-ի ուղղագրությանը վերաբերող եւ ժամանակին տարածված սխալագրությունները (օ-ն՝ ո-ի կամ ով-ի փոխարեն) ավետարանական ընթերցմանը նախորդող մասում սրբագրվել են (օրինակ՝ պոսսիումէ → պոսսիումէ, Յօհաննոս → Յովհաննոս եւն): Պահպանվել է միայն 1836 թ., 1870 թ., 1894 թ. եւ 1905 թ. հրատարակությունների օրթի ուղղագրական ձեւը (որթի կամ որթի ճիշտ ձեւի փոխարեն, որոնցից որթի-ն գործածվում է որոշ հին տպագիր «Ձեռաց Մաշտոց»-ներում, օրինակ՝ Ամստերդամի 1667 թ. եւ Կոստանդնուպոլսի 1807 թ. հրատարակություններում): Որեւէ բնագրում եղած ակնհայտ տառային վրիպակները, ինչպես նաեւ ներկա դերբայի վերջավորության -ոչ/-օչ տարբերակումը (1836 թ. եւ 1870 թ. հրատարակություններում ուղիղ ձեւում հիմնականում -օչ տարբերակն է կիրառվում) եւս սրբագրվել են: Համեմատական բնագիրը կազմողի գիտական սկզբունքները հստակ արտացոլված են սույն հրատարակության մեջ. այսպես՝ բնագրերը որոշ չափով նաեւ վերակետադրվել են, ինչպես ընդունված է գրաբարյան համեմատական բնագրերի հրատարակություններում, սակայն փորձելով պահպանել գրաբարյան հին օրինակներում եղած առողջանական առանձնահատկությունները: Օրինակ՝ եթե միաբառ կոչականի շեշտը դրված է եղել առաջին վանկի վրա, ինչը սովորական է ձեռագրերում ու հին տպագիր գրքերում եւ ներկայացնում է միաբառ կոչականի ավանդական գրաբարյան արտասանությունը, այդ շեշտը չի տեղափոխվել վերջին վանկ ըստ ժամանակակից

գրական հայերենի շեշտադրման: Իսկ որտեղ կոչականը շեշտադրված չի եղել, բայց հարկ է համարվել շեշտադրել, հիմնականում հետեւել են այսօր մեզ համար բնական համարվող արտասանությանը:

Այս հրատարակության հիմնական բնագրում վերնագրերը կրկնում են գլխավորապես 1894 թ. եւ 1905 թ. «Ձեռաց Մաշտոց»-ների տարբերակները, սակայն որոշ դեպքերում նախընտրելի են համարվել 1836 թ. եւ 1870 թ. տպագիր օրինակներին:

Սաղմոսների միջեւ տարբերությունների դեպքում, եթե այդ սաղմոսները կան նաեւ ժամագրքում, նախընտրությունը տրվել է 1836 թ., 1870 թ., 1894 թ. եւ 1905 թ. հրատարակությունների այն տարբերակներին, որոնք համապատասխանում են վերջին ժամանակներում մեր Եկեղեցում գործածվող առենի ժամագրքի (1915 թ. երուսաղեմյան հրատարակություն) բուն ժամագրքի մասում եղած տարբերակներին (առենի ժամագրքի սաղմոսարանի մասի եւ բուն ժամագրքի մասի սաղմոսների միջեւ նույնպես կան տարբերություններ):

Ուղիղ փակագծերում ավելացվել են սաղմոսների եւ աստվածաշնչյան այլ ընթերցվածների տվյալները (գիրք, գլուխ, համարներ): Մեկ-երկու տնից կազմված կցուրդ սաղմոսների տվյալները չեն նշվել:

Համեմատված բոլոր չորս էջմիածնական հրատարակություններում էլ մկրտվողի համար ամենուր գործածվում է «երեխայ» բառաձևը: Սակայն հին «Ձեռաց Մաշտոց»-ներում (ձեռագիր, թե տպագիր) սրա փոխարեն գերազանցապես գործածվում է «երախայ»-ը, որ նաեւ բառի գրաբարյան նախնական ձևն է: Այսպես օրինակ՝ Ամստերդամի 1667 թ., Զմյուռնիայի 1676 թ., Վենետիկի 1831 թ., Երուսաղեմի 1843 թ., 1879 թ. (Կ. Պոլսում ԺԸ. դարում հրատարակված «Ձեռաց Մաշտոց»-ներում՝ 1704 թ., 1714 թ. եւն, խառը գործածվում են երկու ձևն էլ): Ուստի թեեւ 1836 թ., 1870 թ., 1894 թ., 1905 թ. հրատարակություններում գործածված է «երեխայ» ձևը, սակայն ներկայացվող բնագրում ամենուր վերականգնվել է հին եւ առավել ճիշտ բառաձևը՝ «երախայ», ինչպես եւ վարվել են վերջին շրջանի այլ հրատարակիչներ:

Ի տարբերություն վերջին տասնամյակներում տարբեր նվիրապետական աթոռներում հրատարակված «Ձեռաց Մաշտոց»-ների՝ սույն հրատարակությունն աչքի է ընկնում նաեւ մեկ այլ կարեւոր առավելությունով: Խնդիրն այն է, որ վերջին շրջանում լույս ընծայված «Ձեռաց Մաշտոց»-ներում, հաշվի առնելով շարականների խազային համակարգի բարդությունները, շարականների բնագրերը հրատարակվել են կա՛մ ավել-

լի վաղ շրջանում տպագրված «Ձեռաց Մաշտոց»-ում առկա խազագրված շարականի տվյալ հատվածի թվային պատկերն արհեստականորեն նոր հրատարակության շարադրանքին հարմարեցնելով, կա՛մ առանց խազային նշանների (տեխնիկապես բարդ եւ ժամանակատար գործընթաց է), որոնք, թեեւ այսօր անընթեռնելի են, սակայն շարականի երգեցողության ժամանակ օգտակար են, հատկապես, եթե ծիսամատյանում ներառված չեն շարականների եվրոպական նոտագրությունները: Ի պատիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժնի՝ պետք է նշել, որ առաջին անգամ «Ձեռաց Մաշտոց»-ում ներառված շարականների հայկական խազագրության նշանները կիրառվել են արդի տառատեսակների ստեղծման համար նախատեսված չափորոշիչներով (խազագրերի պատրաստումն ու ծրագրային կողավորումն իրականացրել է հայերեն տառատեսակների հեղինակ Ռուբեն Թարումյանը, իսկ դրանք շարականների համապատասխան տեղերում զետեղել է Տ. Ղեւոնդ ավ. քհն. Մայրիլյանը):

Ինչ վերաբերում է սույն հրատարակության մեջ Ս. Մկրտության եւ Ս. Դրոշմի խորհուրդների բնագրերին, ապա պետք է նշել, որ Ս. Էջմիածնի 1836 թ., 1870 թ., 1894 թ., 1905 թ. հրատարակություններում ներկայացված բնագիրը փոխարինվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 2014 թ. նոյեմբերի 11–13-ին գումարված եպիսկոպոսաց ժողովում² ընդունված եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի վավերացրած բարեփոխյալ ծիսակարգի բնագրով: Վերջինիս պատրաստման համար, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությանմբ, դեռեւս 2010 թ. կազմվել էր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական հանձնախումբը, որը պատրաստել էր Ս. Մկրտության կանոնի նոր բնագիրը, կանոնական ուղեցույցը եւ նախամկրտական ուսուցողական ձեռնարկը, որոնք, ինչպես նշեցինք, ընդունվել եւ հավանության են արժանացել վերը հիշատակված եպիսկոպոսաց ժողովում: Հավելենք նաեւ, որ Ս. Մկրտության կանոնի բարեփոխյալ ծիսակարգի բնագիրը,

² 2014 թ. եպիսկոպոսաց Բ. Ժողովի մասին մանրամասն տե՛ս Տ. ՈՍԿԱՆ ՔՀՆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց Բ. Ժողովը, «Էջմիածին», ԺԱ., 2021, էջ 26–38, ինչպես նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսաց Ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, նոյեմբեր Ա., թիվ 21 (425), 2014, էջ 2, 4, 5:

ըստ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2022 թ. նոյեմբերի 10-ի օրհնության գրի, նախատեսված է եղել հրատարակել առանձին գրքուկով. «Ուրախությամբ եւ գոհունակ սրտով ողջունում ենք «Կանոն կենդանարար Սուրբ Մկրտության եւ Սուրբ Դրոշմի» բարեփոխյալ ծիսակարգի հրատարակությունը:

Սուրբ Մկրտության սրբազան խորհրդով մաքրվում է աղամական մեղքը, բաշխվում են տերունապարգեւ կենարար շնորհները, մկրտվածը անդամագրվում է Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն, դառնում տանար Սուրբ Հոգու եւ ժառանգորդ Երկնի արքայության: Այս խորհրդակատարությամբ նաեւ գորանում ու պայծառանում է Սուրբ Եկեղեցին իր նոր անդամներով՝ որպես Տիրոջ խորհրդական մարմին (Հռ. 12.4–5, Ա. Կորնթ. 12.12–13)»: Նոր ծիսակարգը, սակայն, ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված, առանձին չի հրատարակվել, այլ, ինչպես նշեցինք, ներառվել եւ առաջին անգամ լույս է տեսել 2024 թ. «Ձեռաց Մաշտոց»-ում:

Նոր՝ բարեփոխյալ բնագիրը կազմվել է Ս. Էջմիածնի 1905 թ., Երուսաղեմի 1979 թ. եւ Անթիլիասի 1988 թ. «Ձեռաց Մաշտոց»-ների հիմամբ: Դրանք համեմատվել են Ժ.—ԺԱ. դդ. հնագույն երկաթագիր Մաշտոցի, 1300–1600 թթ. ընդօրինակված շուրջ 350 ձեռագիր մաշտոցների սկսվածքների եւ ԺԷ.—ԺԹ. դդ. տպագիր մաշտոցների հետ: Հաշվի է առնվել նաեւ Տ. Տիրան արք. Ներսոյանի՝ 1968 թ. կազմած անտիպ բնագիրը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության գրում մասնավորապես ընդգծել է Ս. Մկրտության կանոնի միասնական բնագրի կարեւորությունը. «Էական եւ կարեւոր է Եկեղեցու Սուրբ խորհուրդների անխաթար կատարումը: Ժամանակի հոլովությամբ աղետված է եղել Սուրբ Մկրտության ծեսի միօրինակությունը, տեղ են գտել անհարկի կրճատումներ եւ փոփոխություններ: Հայ Եկեղեցու Ծիսական հանձնախումբը մշակել է Մկրտության կանոնի միասնական բնագիր եւ կանոնական ուղեցույց՝ ապահովելու Սուրբ Մկրտության խորհրդի անաղարտ եւ համաման կատարումը:

Հայրապետական այսու գրով 2014 թվականի Եպիսկոպոսաց ժողովի կողմից վավերացված Սուրբ Մկրտության վերամշակված կանոնը հաստատում ենք եւ տնօրինում ի գործադրություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական կյանքից ներս»:

Բնագրերի հանգամանալից ուսումնասիրության արդյունքում ծիսական հանձնախումբը կազմել է քննարկվող բնագիրը՝ նկատի ունենալով կանոնի միավորների խորհրդաբանական արժեքը, վաղնչականությունն

ու ընդհանրացվածությունը, կանոնի գործնականությունը եւ հավատացյալներին ծիսական արարողակարգին ներգրավելու հնարավորությունը:

Այս առնչությամբ կատարվել են հետեւյալ աշխատանքները՝

1. Հստակություն է մտցվել Ս. Մկրտության կանոնի խրատների մեջ:

2. Նշվել են սուրբգրային ընթերցումների տեղիները եւ շարականների ձայները:

3. Նարոտով խաչի օրհնությունը տեղափոխվել է արարողության վերջ՝ նկատի ունենալով ներկայիս ծիսագործական կյանքը:

4. Երկու ավետարաններից պահպանվել է միայն Հովհաննեսի Ավետարանի (Գ. 1—8) հատվածը: Դուրս է թողնվել նախկինում ընթերցվող Մատթեոսի Ավետարանը՝ իբրեւ ծեսի մեջ կատարված հետագա հավելում:

5. «Ընկալ մարդասէր» սկսվածքով աղոթքը նախորդ մաշտոցներում ընդմիջվում էր փոքրիկ քարոզով, որից հետո շարունակվում էր աղոթքը: Հանձնախումբը, հաշվի առնելով երկու աղոթքների բովանդակային եւ իմաստային նույնությունը, հանել է քարոզը եւ աղոթքները միացրել:

6. Ս. Դրոշմի արարողությունից հանվել են շարականները եւ ընթերցումները:

7. Հետեւելով էջմիածնական «Զեռաց Մաշտոց»-ին՝ ավելացվել են Ս. Հաղորդությունից հետո ասվող տողերը:

Կանոնական ուղեցույցի համար հիմք են հանդիսացել «Կանոնագիրք Հայոց»-ը, կանոնագիտական այլ երկեր, ինչպես նաեւ խնդրին առնչվող հայրաբանական հարուստ գրականությունը: Ուղեցույցի նպատակը առկա խնդիրները հստակեցնելն ու հոգեւորականներին օգնելն է: Ստորեւ առաջին անգամ հրապարակում ենք նաեւ նշյալ ուղեցույցը.

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ Ս. ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՒ Ս. ԴՐՈՇՄԻ

1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (այսուհետ՝ Հայ Եկեղեցի) Ավագանու կառող են մկրտվել՝

ա) Ազգությանմբ հայեր,

բ) Հայ Եկեղեցու զավակի հետ ամուսնացող եւ ամուսնացած օտարազգիներ,

գ) Հայ ընտանիքների կողմից որդեգրված երեխաներ,

դ) Այլադավան եւ այլակրոն անձեր՝ տեղի հոգեւոր իշխանության արտոնությամբ:

2. Մկրտության խորհրդակատարությունից առաջ տեղի է ունենում նախապատրաստական ուսուցում, որը կազմակերպում է ֆահանան՝ կնֆահոր, երախայի եւ ծնողների հետ:

Նախամկրտական ուսուցման կարգն ու տեսողությունն սահմանում է տեղի հոգեւոր իշխանությունը:

3. Մկրտությունը կատարվում է երիցս ընկղմմամբ: Ընկղմմամբ կատարելու անհնարինության դեպքում կարող է կատարվել ըստ առաջնակարգության՝ կամ հեղմամբ, կամ լվացմամբ եւ կամ ցողմամբ:

4. Մանկահասակ մկրտյալի դեպքում նորամկրտյալին հանդերձավորել նոր՝ սպիտակ զգեստով: Արարողությանը կնֆահայրը կարող է զգեստավորվել եկեղեցական շապիկով:

5. Մկրտության արարողությունից հետո ներկաները կարող են համբուրել նորամկրտյալին:

6. Եթե մկրտվող երախան ունի հայ ֆրիստոնյային ոչ հարիւր անուն, ապա խորհրդակատար հոգեւորականը, խորհրդակցելով կնֆահոր եւ ծնողների հետ, մկրտության ժամանակ նրան կարող է տալ նոր անուն:

7. Մկրտության արարողությունից հետո երեք օրվա ընթացքում կատարվում է մեռոնից հանելու ավանդական կարգը:

8. Մկրտություն չի կարող կատարվել այն հոգեկան հիվանդի նկատմամբ, որ ֆիզիկական վտանգ է ներկայացնում շրջապատի համար եւ բացահայտ աստվածհայեցության մեղքի մեջ է:

9. Հղի կանանց կարելի է մկրտել:

Հղի կնոջ մկրտությամբ՝ պտուղը մկրտված չի համարվում:

10. Չպսակված զույգի եւ միայնակ մոր զավակը կարող է մկրտվել:

11. Ս. Մկրտության համար արգելված օրեր չկան:

12. Մկրտության խորհրդակատարության իրավունքը վերապահված է Հայ Եկեղեցու ֆահանայական աստիճան ունեցող սպասավորներին:

13. Մկրտությունը կատարվում է Եկեղեցու Ս. Ավագանում: Եկեղեցում Ավագան չլինելու դեպքում մկրտությունը կարող է կատարվել մաքուր անոթի

մեջ: Այս դեպքում մկրտության համար օգտագործված ջուրը հեղվում է մաֆուր տեղում:

14. Եկեղեցուց դուրս մկրտությունը կարող է կատարվել, եթե.

ա) երախայի բնակավայրին մոտ Հայ Եկեղեցի չկա,

բ) երբ երախայի կյանքին վտանգ է սպառնում, եւ հնարավոր չէ հասցնել եկեղեցի:

15. Մահամեծ երախան կարող է անհապաղ մկրտվել դիմումի կամ խնդրանքի դեպքում՝ անկախ գտնվելու վայրից:

16. Կնֆահայրը մկրտյալի հոգեւոր ծնողն ու դաստիարակն է:

17. Կնֆահայր պետք է լինի արական սեռի, Հայ Եկեղեցու զավակ, չափահաս տարիքի, ֆրիստոնեական հավատքին ծանոթ եւ բարի վարքի տեր անձ:

18. Կնֆահայր չեն կարող լինել մկրտվողի հայրը, պապը, եղբայրը եւ կենակիցը:

19. Կնֆահոր եւ սանիկի միջեւ ամուսնությունն արգելվում է: Ամուսնությունը կնֆահոր եւ սանիկի հարազատների միջեւ թույլատրելի է ազգակցական 3-րդ աստիճանից:

20. Մկրտյալի դաստիարակության գործում կնֆահորն աջակցում է կնֆամայրը: Ընդհանրապես կնֆամայր է համարվում կնֆահոր օրինական կինը: Խորհրդակատարության ժամանակ կնֆամայրը չի կարող փոխարինել կնֆահորը:

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սուրբ Էջմիածին, Մաշտոց, Մկրտություն, Դրոշմ, բնագիր, եպիսկոպոսաց ժողով, կանոնական ուղեցույց:

РЕЗЮМЕ

Это издание Требника представляет собой уточнённый текст армянского Маштоца Эчмиадзинского редакционного варианта, составленный на основе тщательного сравнения изданий Эчмиадзина 1836, 1870, 1894 и 1905 годов. В уточнённом тексте заголовочные единицы в основном соответствуют вари-

антам Маштоцев 1894 и 1905 годов, однако в некоторых случаях предпочтение отдавалось версиям Маштоцев 1836 и 1870 годов. Тексты были частично переработаны с учётом принятых стандартов для изданий армянских текстов, при этом сохранены орфографические особенности древнеармянских текстов. В данное издание включены новый текст канонов Святого Крещения и Святого Миропомазания, а также каноническое руководство, принятые на епископском соборе, состоявшемся в Эчмиадзине с 11 по 13 ноября 2014 года. Для подготовки нового текста канонов Святого Крещения и Святого Миропомазания использовались Маштоцы 1905 года (Вагаршапат), 1979 года (Иерусалим) и 1988 года (Антилиас). Каноническое руководство основано на «Армянской книге канонов», других канонических произведениях, а также на богатой патрологической литературе, касающейся данной темы. Его цель — прояснить существующие проблемы и оказать помощь духовенству.

SUMMARY

This edition of The Mashdots Ritual Book presents a refined text of the Armenian Mashtots, Echmiadzin editorial variant, compiled through a thorough comparison of the Echmiadzin editions from 1836, 1870, 1894, and 1905. In the refined text, the heading units generally follow the Mashtots editions of 1894 and 1905. However, in some instances, preference was given to the versions from the 1836 and 1870 editions. The texts have been partially revised in accordance with the accepted standards for publishing Armenian texts while preserving the orthographic characteristics of classical Armenian writings. This edition includes newly revised texts of the Canons of Holy Baptism and Holy Chrismation, as well as a canonical guide, all of which were adopted at the episcopal council held in Echmiadzin from November 11 to 13, 2014. For the preparation of the new texts of the Canons of Holy Baptism and Holy Chrismation, the Mashtots editions of 1905 (Vagharshapat), 1979 (Jerusalem), and 1988 (Antelias) were utilized. The canonical guide is based on the ‘Armenian Book of Canons’, other canonical works, and a rich body of patristic literature relevant to this subject. Its purpose is to clarify existing issues and provide guidance to the clergy.

